Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
փետրվարի 23-ի նիստի N 8
արձանագրային որոշման

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
«ԹԵՔՆՈԼՈՋԻ ԷՆԴ ՍԱՅՆՍ ԴԱՅՆԱՄԻՔՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՏԵՂԵԿԱՏՎԱՅՆԱՑՄԱՆ, ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) և «ԹԵՔՆՈԼՈՋԻ ԷՆԴ ՍԱՅՆՍ ԴԱՅՆԱՄԻՔՍ» ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) միասին՝ Կողմեր

Նկատի ունենալով այն, որ ՀՀ Կառավարությունը հաստատակամ է՝ աջակցելու և խթանելու Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկատվայնացման, հեռահաղորդակցության և ինովացիոն ոլորտի մրցունակության զարգացմանը և մրցունակության ուղղությամբ բեկումնային առաջընթացի ապահովմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը և բարձր հավելյալ արժեք ապահովող աշխատատեղերի ստեղծմանը,

Հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետությունն այսօր տարածաշրջանում առաջատար դիրք է զբաղեցնում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում, որը տնտեսության ամենաարագ զարգացող ոլորտներից է, որը մեծապես նպաստում է տնտեսության աճին, մրցունակության, արտադրողականության և երկրի գիտատեխնիկական վարկանիշի բարձրացմանը,

Նկատի ունենալով այն, որ անհրաժեշտ է պետական-մասնավոր համագործակցության սկզբունքի հիման վրա իրականացնել լայնածավալ զարգացման ծրագրեր՝ ուղղված ժամանակակից տեխնոլոգիական ենթակառուցվածքների ստեղծմանը, ֆինանսական գործիքների ներդրմանը, ձեռներեցության խթանմանը, կարողությունների զարգացմանը և արտադրողականության բարձրացմանը, տեխնոլոգիական մասնագետների պատրաստմանը և օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանմանը,

Ելնելով այն հանգամանքից, որ անհրաժեշտ է օգտագործել և ներգրավել սփյուռքի մարդկային և կառուցվածքային ռեսուրսները, առկա ներուժը Հայաստանի կողմից միջազգային հարթակներին առավել արդյունավետ ինտեգրվելու ճանապարհին, ինչպես նաև ներդրումների խթանման, անդրազգային ընկերությունների ներգրավման և մարդկային ռեսուրսների զարգացման գործում,

Հաշվի առնելով այն, որ Ընկերությունը հանդիսանում է ոլորտի առաջատար ընկերություն և առաջարկում է ստեղծել ներկայացուցչություններ թիրախային

շուկաներում, որպես ներառական համագործակցության հարթակ, պետական և մասնավոր հատվածի գործընկերության միջոցով Հայաստանի ՏՀՏ ոլորտի զարգացման և խթանման համար,

Ելնելով այն հանգամանքից, որ Կողմերն ընդունում են պետական և մասնավոր հատվածի գործընկերության միջոցով ներառական համագործակցության և զարգացման նոր հարթակների ստեղծման տեսլականը և անհրաժեշտությունը ՏՀՏ ոլորտի զարգացման համար,

Կողմերը համաձայնեցին կնքել սույն Փոխըմբռնման Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

Հոդված 1. Նպատակը

1.1 Կողմերը պայմանավորվում են ստեղծել ներկայացուցչական գրասենյակներ՝ թիրախային շուկաներում ՏՀՏ ոլորտում գործարար կապերի խթանման, երկրի վարկանիշի և մրցունակության բարձրացման, ներդրումների ներգրավման, արտահանման կարողությունների և ինովացիոն ենթակառուցվածքների զարգացման համար:

1.2 Նպաստել թիրախային շուկաներում երկրի, տնտեսության և ՏՀՏ ոլորտի ներդրումային վարկանիշի բարձրացմանը, ՏՀՏ ոլորտի արդյունքների վերաբերյալ իրազեկվածության բարձր մակարդակի ապահովմանը.

1.3 Նպաստել տեղական կազմակերպությունների և օտարերկրյա ներդրողների միջև գործընկերության հաստատմանը և խթանմանը.

1.4 Ձևավորել հնարավոր օտարերկրյա ներդրողների և մասնագիտական կազմակերպությունների տեղեկատվական բազա,

1.5 Դյուրացնել հայկական և օտարերկրյա ընկերությունների և մասնագետների միջև կապի ստեղծումը, փորձի ուսումնասիրումն ու կիրառումը, ինչպես նաև փորձի փոխանակումը.

Հոդված 2. Համագործակցության հիմնական ուղղությունները

Կողմերը համաձայնվում են համագործակցել և միավորել իրենց ջանքերը գործունեության հետևյալ ուղղություններում.

2.1 Իրականացնել քարոզարշավներ՝ օտարերկրյա ներդրումներ ներգրավելու նպատակով և խթանել հայկական ՏՀՏ ոլորտի ներդրումային հնարավորությունները.

2.2 Կազմակերպել ցուցահանդեսներ, տոնավաճառներ, համաժողովներ (ֆորումներ), սեմինարներ և այլ համանման միջոցառումներ և աջակցել ՏՀՏ ոլորտի կազմակերպություններին և/կամ ձեռնարկատերերին մասնակցությանը.

2.3 Մշակել և իրականացնել Հայաստանի՝ որպես ՏՀՏ առաջատար երկրի և հայկական ՏՀՏ արդյունքի ներկայացման և խթանման, նորարարական և տեխնոլոգիական զարգացման ծրագրեր.

2.4 Տրամադրել օտարերկրյա ներդրողներին «մեկ կանգառի կենտրոն» սկզբունքով Հայաստանի ՏՀՏ ոլորտում ներդրումային և գործարար միջավայրի, առավելությունների և հնարավորությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև ներդրումների իրավական, կառուցվածքային և կազմակերպական պայմանների իրավա-տեղեկատվական աջակցություն.

2.5 Բացահայտել ՏՀՏ ոլորտի կազմակերպությունների արտահանման ներուժը՝ նրանց արտադրանքն ու ծառայությունները գովազդելու և խթանելու նպատակով և քննարկել դրանց զարգացմանն ու արտահանմանն ուղղված գործունեության աջակցման հնարավորությունները.

2.6 Աջակցել արտահանման ներուժ ունեցող կազմակերպություններին բացահայտելու թիրախային շուկաները, տրամադրել թիրախային շուկաների և կազմակերպությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն.

2.7 Նպաստել մասնագետների պատրաստման և վերապատրաստմանը, ծրագրերի մշակմանը, կազմակերպմանը և իրականացմանը.

2.8 Խորհրդակցել ծրագրերի պլանավորման, մշակման, ներդրման, իրականացման և մոնիթորինգի վերաբերյալ:

Հոդված 3. Փոխըմբռնման հուշագրի իրականացումը

Կողմերը համաձայնվում են հետևյալ հիմնական պայմանների վերաբերյալ՝

3.1 Վերոնշյալ հիմնական ուղղություններով պայմանավորված գործողությունների իրականացման նպատակով Ընկերությունը պարտավորվում է իրականացնել ներկայացուցչական գրասենյակների աշխատակիցների աշխատավարձի, վերապատրաստման, տեխնիկական հագեցվածության և այլ ընթացիկ ծախսերը ամբողջ ծավալով:

3.2 «Ներկայացուցչական գրասենյակների աշխատանքը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, ՀՀ կառավարությունը, հնարավորության սահմաններում, անհատույց տրամադրում է գրասենյակային տարածք (առկայության դեպքում) օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանատներում և հյուպատոսական հիմնարկներում: Դա հնարավորություն է ընձեռում ներկայացուցիչների համար ապահովել անհրաժեշտ աշխատանքային տարածք և հասցե»:

3.3 Առանձին ծրագրերի իրականացման մասով Կողմերը կարող են կնքել համաֆինանսավորման կամ դրամաշնորհային համաձայնագրեր, որոնք կհստակեցնեն գործողություններին առնչվող ծախսերը և դրանց ֆինանսավորման մեխանիզմները:

3.4 Կողմերը պայմանավորվում են նաև, որ Հուշագրի ներքո առաջարկվող համագործակցությունը՝ սույն Հուշագրի նպատակների և համագործակցության ուղղությունների մասով, բացառիկ է:

Հոդված 4. Խորհրդակցում և տեղեկատվության փոխանակում

4.1 Կողմերը համաձայնվում են պարբերաբար միմյանց տեղեկացնել և խորհրդակցել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այնպիսի հարցերի շուրջ, որոնք Կողմերի կարծիքով կարևոր են ծրագրի արդյունավետ իրականացման համար:

4.2 Կողմերը համաձայնվում են, որ որոշակի դեպքերում խորհրդակցումը, տեղեկատվության ու փաստաթղթերի փոխանակումը կարող են լինել գաղտնի և/կամ կրեն սահմանափակ հասանելիության բնույթ: Նման դեպքերում կողմերը համաձայնվում են իրականացնել խորհրդակցումը, տեղեկատվության ու փաստաթղթերի փոխանակումը այնպիսի ձևաչափում, որը կապահովի այդ տեղեկատվության և փաստաթղթերի գաղտնիությունը և սահմանափակ հասանելիությունը:

4.3 Կողմերը համաձայնվում են սահմանված պարբերականությամբ անցկացնել հանդիպումներ և/կամ քննարկումներ՝ վերանայելու սույն Հուշագրի ներքո իրականացվող գործողությունների կատարման ընթացքը և ծրագրավորելու/պլանավորելու ապագա գործողությունները:

4.4 Ընկերությունը պարտավորվում է մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը Կառավարությանը ներկայացնի կատարված աշխատանքների և ձեռք բերված կամ ակնկալվելիք արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

Հոդված 5. Տևողությունը, դադարեցումը և փոփոխումը

5.1 Սույն Հուշագիրը գործում է հինգ տարի ժամկետով:

5.2 Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

5.3 Փոխըմբռնման Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի առաջարկությամբ՝ երկու ամիս առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

5.4 Փոխըմբռնման Հուշագրի ժամկետը լրանալուց հետո Կողմերը կարող են գրավոր համաձայնության գալ՝ այն երկարաձգելու վերաբերյալ:

5.5 Փոխըմբռնման Հուշագրի գործողության դադարեցման դեպքում դրա ներքո կնքված համաֆինանսավորման կամ ծրագրի շրջանակներում համագործակցության ցանկացած համաձայնագրեր և ցանկացած ծրագրային փաստաթղթեր նույնպես կարող են լուծվել՝ նման համաձայնագրերում պարունակվող լուծման մասին դրույթների համապատասխան: Այդ դեպքում Կողմերը պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ ապահովելու, որպեսզի սույն Հուշագրով նախատեսված համաֆինանսավորման, դրամաշնորհային

համաձայնագրերի և ծրագրային փաստաթղթերի ներքո իրականացվող գործողությունները հասցվեն պատշաճ և կանոնավոր ավարտի:

Հոդված 6. Ուժի մեջ մտնելը

6.1 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հոդված 7. Այլ հարցեր

7.1 Կատարված է քաղաք Երևանում ս.թ. ----------երկու բնօրինակից, յուրաքանչյուրը հայերեն լեզվով:

7.2 Սույն Հուշագիրը չի հանդիսանում իրավական առումով պարտավորեցնող կամ որևէ իրավունքի համաձայն չի սահմանում իրավական պարտավորություններ:

ՀՀ կառավարության անունից՝	**«ԹԵՔՆՈԼՈՋԻ ԷՆԴ ՍԱՅՆՍ ԴԱՅՆԱՄԻՔՍ» ընկերության *անունից՝***
_____	_____